ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 17.04.2026թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Հեռ. (+374 10) 510 510, www.inecobank.am

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ (ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)

Քարտատեսակ **Գործառնության տեսակ**	ArCa Classic[1]	MasterCard Standard, Visa Classic, SPRINT Card	**MasterCard Gold, Visa Gold**
Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ	**ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ Ռուբլի**	
Քարտային հաշվի տարեկան սպասարկման վճար[2]	2,500 ՀՀ դրամ	4,000 ՀՀ դրամ	**12,000 ՀՀ դրամ**

[1] **Arca քարտերով իրականացված վճարումներից շահառուներին տրամադրվելու է 2% հետվճար: Հետվճարները տրամադրվելու են Arca քարտերով կատարված անկանխիկ գործարքների դիմաց, բացառությամբ հետևյալ գործարքների՝**

- տեղեկատվության, կապի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից,
- ՀՀ պետական բյուջե փոխանցվող վճարումներից,
- բարձր ռիսկային վաճառակետերում կատարված վճարումներից («Մեծահասակների համար նախատեսված բովանդակության», «Ծանոթությունների կայքերի և հարթակների», «Խաղատների և խաղային ծառայությունների», «Կրիպտո փոխանակման, կրիպտո դրամապանակների և այլ կրիպտո ծառայությունների», «Թվային ֆայլերի պահեստավորման և հեռակա օգտագործման ծառայությունների», «Ազարտային խաղերի», «Բարձր ռիսկային ֆինանսական առևտրային հարթակների», «Հեռախոսային մարքեթինգային ծառայությունների», «Ավտոմատ երկարաձգվող բաժանորդագրությունների», «Թանկարժեք մետաղների և քարերի առուվաճառք» սպասարկման կետերը, բացառությամբ՝ Դեղատների),
- ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց ֆինանսական հաստատության օգտին գանձվող վճարումներից:

[2] Ստանդարտ սակագնային պլանի շրջանակներում հաճախորդին քարտը կարող է տրամադրվել առանց քարտային հաշվի տարեկան սպասարկման վճարի կիրառման՝ քարտի գործողության ողջ ժամկետի համար՝

- հաճախորդի նախընտրած արժույթով Classic կամ Standard դասի մեկ քարտ, եթե հաճախորդի ժամկետային ավանդների և/կամ ձեռք բերված պարտատոմսերի (Բանկի կողմից թողարկված) ընդհանուր գումարային մեծությունը քարտի պատվիրման պահին կազմել է 500,001-0,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ,
- հաճախորդի նախընտրած արժույթով Gold դասի մեկ քարտ, եթե հաճախորդի ժամկետային ավանդների և/կամ ձեռք բերված պարտատոմսերի (Բանկի կողմից թողարկված) ընդհանուր գումարային մեծությունը քարտի պատվիրման պահին կազմել է առնվազն 10,000,000ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ,
- հաճախորդի նախընտրած արժույթով Classic կամ Standard դասի մեկ քարտ այն հաճախորդներին, ովքեր Բանկի գործընկեր կազմակերպություններից ստացել են ապառիկ վարկ և դեռևս չեն հանդիսանում Բանկի քարտապաններ:

Կից քարտերի հնարավորություն[3]	ArCa Classic, Visa Classic, MasterCard Standard քարտեր	**ArCa Classic, Visa Classic, MasterCard Standard, MasterCard Gold, Visa Gold քարտեր**
Կից քարտերի հաշվի տարեկան սպասարկման վճար	**Համապատասխան կից քարտի քարտային հաշվի սպասարկման վճարի 50%-ի չափով**	
Կանխիկի տրամադրում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կանխիկացման կետերում	• **Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 0%** • **Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 1%**	
Առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի դրամարկղերում	**Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝** • ՀՀ դրամ՝ 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ • Եվրո՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • ԱՄՆ դոլար՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • ՌԴ ռուբլի՝ 0,5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ **Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝** • Սույն սակագներով սահմանված՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կանխիկացման կետերում կանխիկի տրամադրման համար սահմանված սակագնից և սույն սակագներով սահմանված մինչև վարկային գիծ ակտիվացնելը առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրման սակագնից առավելագույնը:	
Կանխիկի տրամադրում[4] **ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում**[5]	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 1% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 2%	
Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կանխիկացման կետերում և ՀՀ տարածքից դուրս	-	2%, սակայն ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ

[3] Կից քարտերի համար գործում են նույն սակագները, ինչ հիմնական քարտերի համար՝ բացառությամբ քարտային հաշվի ամսական սպասարկման վճարի: Հիմնական քարտապանի կողմից կարող է սահմանվել կից քարտից գործարքների կատարման ամսական առավելագույն սահմանաչափ: Բացառությամբ SPRINT Card-ի:

[4] Առանց քարտի կիրառման բանկոմատներից կանխիկացումը՝ Apple Pay և Google Pay համակարգերի միջոցով իրականացնելու դեպքում միանվագ գործարքի սահմանաչափը՝ 150.000 ՀՀ դրամն է:

[5] Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից՝ այլ բանկերը իրենց կողմից սպասարկվող կանխիկացման կետերում կարող են կիրառել լրացուցիչ վճարներ իրականացվող գործարքների համար: Սույն փաստաթղթով սահմանված սակագինը կիրառվում է գործարքի ամբողջական գումարի նկատմամբ, որը ներառում է նաև այլ բանկի կողմից հնարավոր միջնորդավճարները:

Քարտից քարտ փոխանցման վճար[6] **Քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցում (միայն ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով)**	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 0% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 1%[7]	
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի միջոցով փոխանցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված վճարային քարտերին[8]	0%	
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի միջոցով փոխանցում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված վճարային քարտերին[8]	0.5%	
Կատարված գործարքի վերաբերյալ SMS/Viber/WhatsApp հաղորդագրության ուղարկում[9]	Յուրաքանչյուրը 15 ՀՀ դրամ, եթե հաճախորդը ցանկանում է ստանալ հաղորդագրություն	**անվճար**
	Հաճախորդի կողմից այլ հանձնարարական չլինելու դեպքում հաղորդագրությունները ուղարկվում են 1,000 ՀՀ դրամ/ 2 ԱՄՆ դոլար/ 2Եվրո/125 ռուբլի գումարը գերազանցող գործարքների համար:	

[6] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

[7] Քարտին վարկային գծի առկայության դեպքում հաշիվների միջև փոխանցման դեպքում գործում է Ինեկոբանկի բանկոմատներում հաշվից կանխիկացման սակագինը:

[8] «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի միջոցով քարտից քարտ փոխանցում իրականացնելու դեպքում լրացուցիչ կիրառվում է նաև սույն փաստաթղթով սահմանված *Քարտից քարտ փոխանցման վճար* սակագինը:

[9] Եթե Հաճախորդի հեռախոսահամարը տրամադրված չէ ՀՀ-ում գործող օպերատորների կողմից (օտարերկրյա հեռախոսահամար է), ապա Բանկը կարող է քարտային որոշ գործարքների վերաբերյալ հաղորդագրությունները առաջնահերթ ուղարկել Հաճախորդի հեռախոսահամարին «Viber» կամ «WhatsApp» հավելվածների միջոցով, իսկ այդ հավելվածների միջոցով ծանուցման անհնարինության դեպքում՝ SMS հաղորդագրությամբ: Սույն փոփոխությունը ուժի մեջ է մտնում 20/11/2023 թ.-ից

Քարտի առաքման դեպքում քարտի տրամադրման վճար[10]	**անվճար**

Առանց գրավային ապահովության վարկային գծերի տրամադրման պայմաններ և սակագներ

Գործառնության տեսակը		**SPRINT Card**	**MasterCard Standard, Visa Classic**	**MasterCard Gold, Visa Gold**
Վարկային գծի սահմանաչափ	ՀՀ դրամ	300,000-10,000,000	300,000-10,000,000	**300,000-10,000,000**
Տարեկան անվանական տոկոսադրույք 1-ին խմբի[11] **գործարքների համար**	ՀՀ դրամ	19-20.5%	19-20.5%	**19-20%**
Տարեկան անվանական տոկոսադրույք 2-րդ խմբի[11] **գործարքների համար**	ՀՀ դրամ	19-20.5%	19-20.5%	**19-20%**
Տարեկան փաստացի տոկոսադրույք	ՀՀ դրամ	21.13-23.46%	21.13-23.46%	21.16-23.93%
Անտոկոս ժամանակահատված	1-ին խմբի գործարքներ[7]	չի կիրառվում		
	2-րդ խմբի գործարքներ[7]	մինչև 52 օր՝ կախված վարկն օգտագործելու		

[10] SPRINT Card-ը թվային է և չունի առաքման հնարավորություն:

[11] 1-ին խմբի գործարքներ

- գործարքներ, որոնք կատարվել են այն կետերում, որոնք գրանցված են որպես
  - ✓ կանխիկացման կետ
  - ✓ պետական վճարումների իրականացման կետ
  - ✓ քարտից քարտ փոխանցման կետ
  - ✓ քարտով կոմունալ վճարումների իրականացման կետ
- քարտից «Պարբերական վճարումների» միջոցով կատարվող գործարքները
- 2-րդ խմբում չներառված բոլոր գործարքները, եթե այլ բան չի նախատեսված Բանկում գործող ծառայությունների պայմաններով:

2-րդ խմբի գործարքներ

որպես առևտրի և սպասարկման կետ գրանցված կետերում կատարված անկանխիկ գործարքներ:

Cashback/հետվճար[12]	1% առավելագույնը 10,000 ՀՀ դրամ[13]	-
Վարկային գծի ամսական նվազագույն Cashback/հետվճարի չափ	օգտագործված վարկի գումարի 5%	օգտագործված վարկի գումարի 5%
Վճարման ժամկետ՝ սկսած Քաղվածքի օրվանից (ներառյալ)	21 օր	21 օր
Վարկային միջոցների հաշվին վարկի մարման վճար՝ մարվող գումարից	1%	1%

Անշարժ գույքի գրավով վերականգնվող վարկային գծերի տրամադրման պայմաններ և սակագներ

Գործառնության տեսակը		**MasterCard Standard, Visa Classic MasterCard Gold, Visa Gold Visa Platinum**[14]	
Վարկային գծի սահմանաչափ[15]	ՀՀ դրամ	**1,500,000-5,000,000**	
Տոկոսադրույքի տեսակը		**հաստատուն**	
		Եկամուտների հիմնավորմամբ	**Առանց եկամուտների հիմնավորմամբ**

[12] 01/07/2026թ-ից սույն փաստաթղթով սահմանված Sprint Card-ի շրջանակում Cashback/հետվճարի տրամադրում չի իրականացվելու:
[13] Cashback/հետվճարը տրամադրվում է սույն փաստաթղթով սահմանված 2-րդ խմբի գործարքների համար: Cashback/հետվճարի տրամադրման պայմանները ավելի մանրամասն ներկայացված են սույն փաստաթղթի «Cashback/հետվճարի տրամադրման պայմաններ» հատվածում:
[14] Visa Platinum քարտատեսակի տրամադրման և սպասարկման պայմանները և սակագները կարգավորվում են «Պրեմիում դասի վճարային քարտերի և վարկային գծերի տրամադրման և սպասարկման պայմաններ և սակագներ» փաստաթղթով:
[15] Մինչև 2,000,000 ՀՀ դրամ վարկային գծերը տրամադրվում են այն դեպքում, եթե միևնույն անշարժ գույքի գրավով տվյալ հաճախորդի համախառն պարտավորությունները, ներառյալ նոր տրամադրվող վարկային գիծը կազմում են նվազագույնը 2,000,000 ՀՀ դրամ/4,000 ԱՄՆ դոլար:

Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն		• **Գնահատված իրացվելի արժեքի 70% Երևան քաղաքում գտնվող գույքի դեպքում** • **Գնահատված իրացվելի արժեքի 65% Երևան քաղաքից դուրս Բանկի համար այլ ընդունելի վայրում գտնվող գույքի դեպքում**	• **Գնահատված իրացվելի արժեքի 50% Երևան քաղաքում գտնվող գույքի դեպքում** • **Գնահատված իրացվելի արժեքի 45% Երևան քաղաքից դուրս Բանկի համար այլ ընդունելի վայրում գտնվող գույքի դեպքում**
Տարեկան անվանական տոկոսադրույք 1-ին խմբի[11]գործարքների համար	**ՀՀ դրամ**	**14-16%**	**16-17%**
Տարեկան անվանական տոկոսադրույք 2-րդ[11] խմբի գործարքների համար	ՀՀ դրամ	14-16%	**16-17%**
Վարկի առավելագույն գումարը և տարեկան անվանական տոկոսադրույքը որոշվում են համաձայն հաճախորդի վարկարժանության գնահատականի:			
Տարեկան փաստացի տոկոսադրույք	ՀՀ դրամ	16.04-20.91%	**18.41-22.20%**
Անտոկոս ժամանակահատված		**չի կիրառվում**	
Վարկի տրամադրման միանվագ վճար		**0.5% վարկի պայմանագրային գումարից, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ**	
Վարկային գծի ամսական նվազագույն հետվճարի չափ		**օգտագործված վարկի գումարի 1%**	
Վճարման ժամկետ՝ սկսած Քաղվածքի օրվանից (ներառյալ)		**21 օր**	
Վարկային միջոցների հաշվին վարկի մարման վճար՝ մարվող գումարից		**1%**	

1. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերը տրամադրվում են 5 տարի ժամկետով, բացառությամբ ArCa վճարային քարտերի, որոնք տրամադրվում են 2 տարի ժամկետով:
2. Քարտային հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
3. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը 0% է:
4. Քարտով կոմունալ վճարումների իրականացման համար միջնորդավճար չի սահմանվում:
5. Քարտով անկանխիկ գործարքների իրակացումն անվճար է: Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում:
6. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը 10 գործարք է:
7. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն սահամանաչափն է՝

	ArCa Classic, MasterCard Standard, Visa Classic, SPRINT Card	MasterCard Gold, Visa Gold քարտեր
ՀՀ դրամ	1,250,000	2,000,000
ԱՄՆ դոլար, Եվրո	2,500	4,000
ՌԴ ռուբլի	200,000	300,000

8. Հաճախորդի դիմումի համաձայն կանխիկացման սահմանաչափը պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար բարձրացման դեպքում[16] կիրառվում է 10,000 ՀՀ դրամ սակագին:
9. Քարտը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը: Քարտի շտապ պատվիրման դեպքում լրացուցիչ գանձվում է 3,000 ՀՀ դրամ սակագին: Շտապ պատվիրման դեպքում քարտը տրամադրվում է 1 բանկային օրվա ընթացքում Բանկի Մանրածախ կամ Ունիվերսալ մասնաճյուղում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը:
10. Քարտերի առաքման հնարավորությունը հասանելի է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Քարտերի առաքման հնարավորությունը գործում է Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի/ԻնեկոՄոբայլ հավելվածի միջոցով նոր քարտ պատվիրելու դեպքում, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի/ԻնեկոՄոբայլ հավելվածի միջոցով հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա քարտի վերաթողարկման դեպքում: Քարտը հաճախորդին առաքվում է Բանկում քարտի առաքման փաթեթը պատրաստ լինելուց հետո 1-3 աշխատանքային օրերի ընթացքում Երևանի տարածքում և 1-5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ մարզերում առաքումների դեպքում և հաճախորդին հանձնվում է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում: Քարտի բլոկավորումը և ապաբլոկավորումը անվճար է:
11. Կորցրած կամ վնասված քարտի վերաթողարկման դիմում ներկայացնելու դեպքում գանձվում է 2,000 ՀՀ դրամ միանվագ սակագին, բացառությամբ ArCa վճարային քարտերի, որոնց դեպքում սակագինը կազմում է 1250 ՀՀ դրամ: Բացառությամբ SPRINT Card-ի:
12. Նոր պին կոդի տրամադրման համար միջնորդավճար չի գանձվում:

[16] Կանխիկացման սահմանաչափի բարձրացումը իրականացվում է Բանկի համաձայնությամբ:

13. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապաակտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնեկոՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:

14. ՀՀ տարածքից դուրս գործող բանկերի բանկոմատների և/կամ POS տերմինալների միջոցով գործարքներ կատարելիս քարտի առգրավման դեպքում գանձվում է միջնորդավճար՝ համաձայն Վճարային համակարգի և/կամ սպասարկող Բանկի կողմից ներկայացված ծախսերի, բայց ոչ պակաս քան 10,000 ՀՀ դրամ:

15. Քարտային հաշվի վաղաժամկետ փակումն անվճար է:

16. Քաղվածքի ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը: Ամսական քաղվածքի տրամադրումը անվճար է: Յուրաքանչյուր լրացուցիչ քաղվածքի տրամադրման դեպքում գանձվում է սակագին՝ համաձայն համապատասխան սակագնային պլանի:

17. Քարտային հաշվի առաջին տարվա սպասարկման վճարը վճարվում է անմիջապես քարտային հաշիվը բացելիս, իսկ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար վճարվում է մինչև Քարտի թողարկման ամսվա 25-ը, եթե այլ բան նախատեսված չէ սակագներով:

18. Բանկի Ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի միջոցով վճարային քարտերով իրականացվող գործարքների համար կիրառվում է սույն փաստաթղթով սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման սակագինը՝ բացառությամբ կոմունալ վճարումների իրականացման գործարքների, որոնց համար միջնորդավճար չի սահմանվում:

Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

Cashback/հետվճարի տրամադրման պայմաններ

1. Cashback/հետվճարը ակտիվանում է ավտոմատ կերպով՝ Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ և չի ենթադրում որևէ լրացուցիչ վճար կամ այլ տեսակի վճարներ:

2. Cashback/հետվճարը նախատեսվում է տրամադրել քարտով իրականացված 2-րդ խմբի բոլոր գործարքների համար, հաշվետու ամսվա ընթացքում կատարված 2-րդ խմբի բոլոր գործարքների հանրագումարի 1%-ի (մեկ տոկոս) չափով, սակայն ոչ ավել քան ամսական 10,000 ՀՀ դրամ: Cashback/հետվճարը տրամադրվում է քարտապանի քարտային հաշվին՝ ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով և չափով հարկումն իրականացնելուց հետո:

3. Հաշվետու ամսվա cashback/հետվճարը Քարտային հաշվին վճարվում է հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 10-րդ օրը:

4. Կանխիկացման գործառնությունների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների, էլեկտրոնային փողերի, խաղադրույքների, պետական մարմինների վճարումների (հարկեր, տուրքեր և այլ վճարներ) և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Cashback/հետվճար չի կիրառվում:

5. Cashback/հետվճարը գործում է մինչև քարտի վերջնաժամկետի նախորդող ամիսը:
6. Բանկը կարող է վերանայել և դադարեցնել cashback/հետվճարի տրամադրման պայմանները:
7. Քարտատիրոջ կողմից Քարտը գործողության ժամկետից շուտ փակելու դեպքում կուտակված և դեռևս չվճարված գումարները զրոյացվում են և ենթակա չեն վճարման Քարտատիրոջ քարտային հաշվին:

Ընդհանուր դրույթներ Վարկային գծի տրամադրման համար

1. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷՋՈՒՄ:
3. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
4. Վարկային գիծը տրամադրվում է քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար:
5. Վարկային գիծը տրամադրվում է անկանխիկ ՝ մայր գումարի և տոկոսագումարների ամսական մարման պայմանով: Տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի նվազող մնացորդի վրա՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
6. Վարկային գծի չօգտագործված միջոցների դիմաց տոկոս չի կիրառվում:
7. Արտոնյալ ժամանակահատվածով վարկային գծի տրամադրման դեպքում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում օգտագործված Վարկային գծի գումարը կամ դրա մի մասը մինչև Վճարման ժամկետի ավարտի օրը (ներառյալ) վերադարձնելու դեպքում, այդ գումարի նկատմամբ Գրանցման օրվանից մինչև փաստացի վճարման օրը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար տոկոսներ չեն հաշվարկվում:
8. Ժամկետանց պարտավորությունների մարում՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ չմարված գումարի 0.13% -ի չափով:

9. Վարկային գիծը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել, որի դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:
10. Առանց գրավային ապահովության վարկային գծի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել
- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ),
- եկամուտները հիմնավորող փաստաթուղթ, այդ թվում աշխատավայրից տեղեկանք (ըստ պահանջի):
11. Անշարժ գույքի գրավով ապահովված վարկային գծի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր

<u>Մինչև վարկի հաստատումը</u>

- Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ)
- Անշարժ գույքի սեփականության վկայականի բնօրինակ և հիմք
- Անշարժ գույքի սեփականատերերի և համասեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր
- Ամուսնության վկայական (եթե ամուսնացած է), ամուսնալուծության վկայական (եթե ամուսնալուծված է), ինչպես նաև դատարանի որոշում (եթե ամուսնալուծվել է դատարանով) կամ մահվան վկայական (եթե այրի է), (եթե գույքը ձեռք է բերվել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը)
- Ամուսնացած կամ ամուսնալուծված լինելու դեպքում կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ (եթե գույքը ձեռք է բերել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը)
- Անշարժ գույքի նախնական գնահատման հաշվետվություն/ակտ
- Եկամուտները հիմնավորող փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում (եկամուտների հիմնավորմամբ վարկերի դեպքում)

<u>Վարկի հաստատումից հետո</u>

- Անշարժ գույքի միասնական տեղեկանք (բնօրինակ կամ էլեկտրոնային տարբերակ՝ տրամադրված Կադաստրի Կոմիտեի կողմից)
- Անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական(էլեկտրոնային տարբերակ՝ տրամադրված Կադաստրի Կոմիտեի կողմից)
- Գնահատման հաշվետվություն (ըստ Բանկի պահանջի)

12. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների վճարներ՝[17]

Գույքի գնահատման վճար
- 15.000-25.000 ՀՀ դրամ

Միասնական տեղեկանք
- Մինչև 10.000 ՀՀ դրամ

Նոտարական վավերացման վճարներ
- Մինչև 15.000-40.000 ՀՀ դրամ

Գրավի պետական գրանցման վճար
- Մինչև 45.000 ՀՀ դրամ

Նոտարական փաթեթներում առկա հայտարարություն/համաձայնություն

[17] Անկախ սույն պայմաններում նշված դրույքաչափերից, երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմանց վճարները կարող են փոփոխվել:

- Ամուսնացած լինելու դեպքում՝ կնոջ/ամուսնու համաձայնություն՝ 8.000 ՀՀ դրամ
- Ամուսնացած չլինելու դեպքում՝ ամուսնացած չլինելու վերաբերյալ հայտարարություն՝ 1.500 ՀՀ դրամ

13. Բանկի կողմից տրամադրվող համաձայնությունների միջնորդավճարը սահմանվում է 10,000 ՀՀ դրամ:
14. Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ՝
- կայուն եկամտի աղբյուր,
- դրական կամ չեզոք վարկային պատմություն,
- արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր:

15. Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ՝
- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ,
- հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում,
- բացասական վարկային պատմություն,
- հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ:

16. Վարկի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում՝ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 1 աշխատանքային օր:
17. Վարկի տրամադրման ժամկետ՝ վարկի տրամադրման դրական որոշման կայացումից հետո 3 բանկային օրվա ընթացքում:
18. Վարկային գծերը ձեվակերպվում են բանկի մասնաճյուղերում, կենտրոնական գրասենյակում և sprintonline.am հարթակի միջոցով: Բանկի մասնաճյուղերի հասցեներին կարող եք ծանոթանալ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:
19. sprintonline.am հարթակի միջոցով վարկային գծերը տրամադրվում են բացառապես հարթակից պատվիրվող նոր քարտերի դեպքում

Վարկային պատմության և վարկային սքորի էությունն ու բարելավման ուղղությունները

Վարկային պատմություն

Վարկային պատմությունը հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է: Վարկային պատմությունը կարող է ազդել վարկի գծով որոշումների կայացման վրա և ներառում է առնվազն 5 տարվա վաղեմությամբ տեղեկատվություն:

Վարկային պատմությունը ներառում է՝

- հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների չափի, տարեկան տոկոսադրույքի, պարտավորությունների մնացորդի, դրանց դիմաց գրավադրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների գծով վճարների պատմությունը, ներառյալ սահմանված ժամանակացույցից վճարումների ուշացումները
- Այլ անձանց տրված երաշխավորությունները
- Հաճախորդին փոխկապակցված անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը

Վարկային պատմության վերաբերյալ հաճախորդն առավել մանրամասն կարող է ծանոթանալ այցելելով՝ https://www.abcfinance.am, Հաճախ տրվող հարցեր - ԱԲՌԱ (acra.am) և www.acra.am էլ. հղումներով:

Վարկային պատմության մեջ սխալների ու թերությունների հայտնաբերման դեպքում պարզաբանման և ուղղման նպատակով հաճախորդները կարող են այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվությունը վարկային բյուրո փոխանցած ֆինանսական կազմակերպությանը:

Վարկային սքոր

Վարկային սքորը հաճախորդի սպասարկած պարտավորությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատական է, որը ցույց է տալիս տվյալ հաճախորդի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում:

Բանկը մանրածախ վարկավորման ոլորտում հաճախորդների վարկարժանության գնահատման համար օգտագործում է սեփական սքորինգային համակարգը:

Սքորի հաշվարկման հիմքում ընկած են հետևյալ գործոնների խմբերը՝

- Հաճախորդի վարկային պատմությունը (վճարումների ուշացումները նվազեցնում են սքորը)
- Հաճախորդի զբաղվածության և եկամտի վերաբերյալ տեղեկատվությունը (բացակայությունը նվազեցնում է սքորը)
- Հաճախորդի սոցիալական և վարքագծային այլ գործոնները (ունեն սքորի վրա ինչպես դրական այնպես էլ բացասական ազդեցություն, կախված գործոնի տեսակից և արտահայտման ձևից)

Վարկային պատմության և սքորի բարելավման ուղղություններ

Հաճախորդները իրենց վարկային պատմության և սքորի բարելավման համար պետք է՝

- իրականացնեն իրենց ստանձնած պարտավորությունների գծով վճարումները ժամանակացույցին համաձայն
- խուսափեն վարկային ծանրաբեռնվածությունից և չհիմնավորված նոր վարկային հայտերից
- խուսափեն անվստահելի երրորդ անձանց երաշխավորությունների տրամադրումից: